

Սառուցիկ հով մը զըխուր կը սարսուացնէ ֆառափներն,
Ուր կը շրջեն, կը պողան համբարուններն անհամբոյր,
Ու հոգեւարժ մ'անսահման, հըռընդիւններ հանելով,
Կը բարձկոծէ փողոցին մէջի տուններն անաբեկ:

Նըւագախումբ մ'ոյր վարիչն է սէզաւուր մի խափեիկ,
Օրն ի բուն կարգը կ'աւրէ դաւնաւորուած զոյգերուն.
Ու ժողովուրդն՝ արտաւանօ՜ խոնջ, խառնիխուռըն, սիրենդ,
Կ'երթեւեկէ, կ'ոսոսուէ, կը վարմոփի, կը պարէ:

Արդ, այս բոլոր բարձումները, այս ճիշերն այլազան
Կը նըբմարեմ ես այլ եւրս ամպերու մէջէն լոկ.
Իբրեւ թէ այս ընդարձակ սիւզերէն անողոք
Անջատէին, վերջնապէս, գիս աւխարհներ եւ դարեր:

Մեռնիլը ո՛րքան է ֆաղցր, երբ ժըխուր ողջերուն
Թառանգի պէս կը վազէ մեր հոգիին վրայ թըմրած...
Ու կը դիտեմ այն ասեմ, առանց պատշաճ երազի,
Կայքահանդէսն այն զըխուր ուր պատմեցի ես իմ կեանքն:

RENÉ FAUCHOIS

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ժ Ո Ղ Ո Վ Ո Ղ Ի

ՀԻՆ ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վաղուց նկատուած է որ, հայերէն ձեռագիրներու մէջ գտնուող ժողովուրդի զբը-
քերը իրարու չեն նմանիր, և տարբեր թարգմանութիւններ կը թուին:

Հ. Յ. Զօհրապեան⁽¹⁾ Աստուածաշունչի քննական հրատարակութեան տաթիւ իր
ձեռքին տակ ունեցած զանազան զրչագիրներու մասին իր Նախարանութեան մէջ կա-
րեւոր տեղեկութիւններ տալու ատեն, ասոնցմէ երրորդին մասին կը զրէ նաեւ հետեւ-
եալը. «Այս մատեան ևեթ յամենայն զրչագիրս մեր առաւելապէս համաձայնէր ընդ
զաղափարին սկանայ, յանաւանդ յերիս գիրսն սողոմսնի՝ յԱռական, ի ժողովուրդն, և
յերզան, որպէս զի ի սոսա բազդատեալ ընդ այլոց՝ թուին իմն այլ և այլ թարգմա-
նութիւնք» (էջ 13):

Իրմէ յետոյ, նոյն դարուն վերջերը, Նորայր Ն. Բիւզանդացի⁽²⁾ ևս գիտած է
սոյն զբքերուն մէկէ աւելի թարգմանութեանց գոյութիւնը և գրած է. «Գիտելի է որ
Առական, ժողովուրդի և երգոց երգոյն ունինք կրկին թարգմանութիւնս, հանգսյն իմաս-

(1) Աստուածաբան Մատեան, Հատոր Առաջին, 1805, Վենետիկ:

(2) Կոթիւն վարդապետ և Նորին Թարգմանութիւնք, Գիրք Մակարայեցոց, Եւթաղ Ազեր-
սանդրացի, Ազաթանգեղոս, և Փատտոս Բիւզանդ, Տփղիս, 1900, էջ Իե + 520:

տուժեանն Սիրաքայ, Բագում ուրեք ի նոր Հայկազենին կը յիշատակուին այս գրոց մի եւ նոյն տեղիք այլակերպ լեզուաւ. բայց կսկտուր պատառիկք բաւական չեն ընդարձակ գատաւտանի համար, եւ կը շատանամ նշանակելով միայն զգոյութիւն երկուց թարգմանութեանցն (էջ 384):

Այս հեղինակներու նկատողութիւններէն միկնելով բազդատեցինք իրարու հետ ժողովողի երկու հրատարակութիւնները, Ոսկանինը եւ Զօհրայեանը, եւ եկանք այն եզրակացութեան որ ստուգիւ տարբեր թարգմանութիւններ են առոնք:

Ստորեւ կը դնենք զէմ առ զէմ տարբեր ընթերցուածներու հաւաքում մը, կարեւորներուն Յունարէն բնագրի հետ բազդատու թիւններով միասին:

Զօհրայեան

Ոսկան

- | | |
|--|---|
| Ա. 3.— ընդ արեգակումբ | ի ներքոյ արեգական |
| 6.— ոչ ընտ | ոչ ընտնի |
| 10.— եւ ոչ է ամենայն առժամայն ընդ արեգակումբ. զի զոր խօսիցի ոք՝ եւ օտիցէ՝ ահաւասիկ այս նա՛ր է, վա՛ղ իսկ եղեալ է ի յաւիտենից եղելոցն նա՛խ քան զմեզ: | եւ ոչինչ գոյ յամենայնի առժամայն ի ներքոյ արեգական: զի զոր խօսեսցի ոք՝ եւ ասացէ: ահա այս նոր է: յառաջագոյն եղեալ է յաւիտենից եղելոցն նախ քան զմեզ: |
| 11.— Նա եւ տ՛է վերջնոցն որ լինելոց են. տ՛է գոյ յիշատակ նոցա ընդ լինելոցսն ի վախճանի: | Բայց եւ ոչ ի վախճանի եղելոցն, ոչ գոյ նոցա յիշատակ հանգերձ եղելովքն ի վերջինսն |
| 12.— եկլէսիաստէս | Ժողովօղ |
| 18.— Զի բազմութիւն իմաստութեան բազմութիւն գիտութեան. եւ որ յուզեաց ի գիտութիւն յաւելցէ ի ցաւս: | Վասնզի ի բազում իմաստութեան է յուռ՝ վտթիւն գիտութեան: եւ որ յաւելանայ ի գիտութիւն յաւելանայ ի ցաւս: |
| Բ. 5.— անենարեք ⁽¹⁾ | անենապտող ⁽²⁾ |
| 6.— արարի ինձ աւազանս ջրոյց արուցանել ի նոցանէ զանտառախիտս մարեաց: | Արարի ինձ աւազանս ջրոյ՝ առնել ի նոցանէ զանտառս զուարճակալ ծառոց: |
| 14.— եւ գիտացի ես թէ պատահար մի պատահելոց է ամենեցուն նոցա: | եւ ծանեայ՝ զի մի յիպուած է յամենեսին ի նոսա: |
| Գ. 13.— այն պարգեւ Աստուծոյ է | այն տուրք Աստուծոյ են |
| 14.— պակասեցուցանել | ի բաց բառնալ |
| Դ. 12.— երկուքն կայցեն ընդդէմ նորա. եւ առասան երեքկիւն | երկուքն կալցեն զզէմ նորա. եւ առասան երեկուղի. |
| 18.— քանզի պատուական է քան ըզտուրս անպգամաց՝ զոհ ⁽³⁾ քո, զի ոչ եթէ գիտակ ինչ են առնելոց բարիս: | Զի լաւագոյն է հնազանդութիւն քան ըզտուրս անպգամաց՝ վասնզի ոչ են գիտակ բարիս առնելոյ: |
| Ե. 7.— եւ յաճախութիւն հողոյ | եւ զառաւելութիւն երկրի |
| 12.— է խրատ մի | է հիւանդութիւն ⁽⁴⁾ |

(¹) Այս եւ հետագայ շեղագրուած բառերը ոսկեղարեան շրջանակէն դուրս կը ծնան թերեւս, բայց բաւարար պայցոյց չեն թուիր՝ սոյն թարգմանութիւնները դուրս հանելու ոսկեղարեան շրջանակէն, ուր կը գրուին առհասարակ:

(²) Յունարէն = πᾶν χαρπός:

(³) Թ. θυσία. — Մերիքինս այս համարը քիչ մը կը տարբերի Եբր. եւ Յոյն բնագիրներէն:

(⁴) Թ. ἀρρωστία:

16. — և ի բողոսմ սրտմտութեան և ի հիւանդութեան և ի բարկութեան
18. — որում ետ նմա Աստուած ⁽⁵⁾ մեծութիւն
- Զ. 1. — և բողոսմ է յոյժ ի վերայ մարդոյ
2. — և ոչ առնիցէ զնա Աստուած իշխան ուտել ի նմանէ
5. — քանզի վարե ոչ ետես՝ և ոչ զիտաց
6. — Եւ եթէ ⁽⁶⁾ եկաց նա զհազար տամաց ելս
8. — զի տնանկն գիտէ
Է. 2. — քան զոգորմութիւն բարի
6. — զպատուհաս
7. — ընդունայնութիւն է
8. — զրպարտութիւն ձփեցուցանէ զիմաստունս, և կորուսանէ ըզսիրտ ազնուութեան նորա:
14. — Տես զգործս Աստուծոյ զի ո՞վ է այն որ կարող լինիցի զարդարել զօր Աստուածն խանգարիցէ
19. — բարի է թէ ի կողմն այստիկ լինիցիս, սակայն և այստիկ մի պղծեր զձեռն քո. զի որ երկնչի յԱստուծոյ՝ անցցէ ընդ ամենայն:
23. — յառաձեռնացի ⁽⁷⁾ ընդ քեզ
Ը. 5. — հրեշտակութիւն
12. — և ի վազնուց
17. — որքան ջանասցի մարդ
Թ. 2. — Ամենայն ինչ առաջի երեսաց նորա է. և ունայնութիւն է յամենայնի: Պատահար է յարդարն և յամպարիշտն, ի բարին և ի չարն, ի արբուսն և ի պղծում, որ մատուցանէ պատարագ՝ և որ ոչն մատուցանէ: Որպէս որ բարին՝ և որպէս որ մեղանչէն. որպէս որ երզնուն՝ և որպէս որ յերզմանէն երկուցեալ է:
8. — Յամենայն ժամ եզիցին ձորձք քո
15. — այր մի տնանկ իմաստուն ⁽⁸⁾
- և սրտմտութեամբ բազմաւ, հիւանդութեամբ և ցամամբ
- որոյ ետ Աստուած մեծութիւն
- և բողոսմ է ի վերայ մարդկան եւ ոչ տացէ նմա Աստուած իշխան ուտել ի նմանէ քանզի զարեզակն ոչ ետես, և ոչ ծանեաւ
- Եւ եթէ ⁽⁶⁾ եկաց նա զհազար տամաց շրջանակս քանզի աղքատն գիտէ քան զիւղ ⁽⁷⁾ բարի զսպառնալիս անտի է Վասնզի զրպարտութիւն սահեցուցանէ զիմաստունս, և կորուսանէ զսիրտ պնտութեան նորա: Տես զարարածս Աստուծոյ վասնզի ով կարէ զարդարել՝ զօր Աստուած եղծցէ:
- Բարի է քեզ՝ եթէ պաշտպանիցիս յայստիկ, սակայն այստ մի պղծիցիս զձեռն քո. վասնզի երկուցածն ⁽⁸⁾ յԱստուծոյ անցցէ ընդ ամենայն: չարախօսեացէ զքեզ պատգամաւորութիւն և ի վազուց ժամանակաց զօր միանգամայն ջանասցէ մարդ Ամենայն ինչ առաջի երեսաց նորա է, և ընդունայնութիւն է յամենեանս: Դիպառած է արգարսոյն՝ և ամբարշտին, բարւոյն՝ և չարին. սրբոյն և պղծոյն, այնմ որ զօհիցէ՝ և որ ոչն զոհիցէ: Որպէս բարին՝ և որպէս յանցաւորն, որպէս որք երզնուցուն՝ և որպէս որք երկնչին յերզմանէ:
- Ծամենայն ժամանակի եզիցին հանդերձք քո այր աղքատ և իմաստուն

(5) Թ. ὡς ἐδωκεν αὐτοῦ ὁ Θεός:

(6) A ունի καὶ εἰ:

(7) Թ. ἑλαιον:

(8) A ունի ο φοβούμενος:

(9) Երուսաղէմի թիւ 2558 Ձեռագիր Աստուածաշունչը ունի «չարահամբաւեցի»:

(10) Թ. ἄνδρα πένητα σφόδρα:

- Ժ. 3.- Սիրտ նորա կասեցի Սիրտ նորա պակասեցի
9.- Եւ որ բառնայ քարինս՝ նոքիմբ Եւ որ բառնայ զքարինս՝ վտանկեսցի նո-
չարչարեսցի, և որ պատուէ քիմբ, և որ հերձանէ զփայտ՝ վշտացի
փայտ՝ նոզին ճգնեսցի: Ի նոսին:
13.- և վախճանն նորա ծուփ չարու- և վերջինք բերանոյ նորա յածումն չար
թեան
19.- Ի ծաղր առնեն զհաց, և զինի Ի ծաղր առնել զհաց՝ և զզինի. և իւղ⁽¹¹⁾
և եւղ⁽¹¹⁾ ուրախ առնեն զկեն- ուրախ առնէ զկենդանիս. և արծաթոյ
դանիս. և արծաթոյ լուիցէ ա- լուիցէ ամենայն ոք:
մենայն ինչ⁽¹²⁾:
20.- մի անիծանիք մեծի մի նզովեսցես զմեծն
ԺԱ. 5.- յարգանդի յորովայնի
9.- անբիծ անարատ
ԺԲ. 1.- Եւ յիշեա զու զայն որ հաս- Եւ յիշեա զարարիչն քո . . . և ժամանես-
տատեսացն զքեզ . . . և հասցեն ցին ամբ
ամբ
8.- ամենայն ինչ ընդունայն է: Եւ ամենայն ինչ անտի և աւելորդ է:
աւելի իմն է
11.- Եւ իբրեւ րեհուք հարեալք⁽¹³⁾ Ի Եւ իբրեւ րեհուք հրացեալք⁽¹⁴⁾, որք տուան
մուրհակաց տուան ի հովուէ մի- ի նշանակացն ի հովուէ միոջէ:
ոջէ
12.- և վարժ բազում աշխատութիւն և խորհուրդք բազումք՝ և ջան մարդոյ:
է մարմնոյ⁽¹⁵⁾:

Վերոգրեալ տարբերութիւնները մէկ փոքր մասը միայն կը ներկայացնեն երկու օրինակներուն միջև գոյութիւն ունեցող յոյժ բազմաթիւ զանազանութեանց: Հարկ չդատեցինք հոս տալ այդ տարբերութեանց լիակատար նույնալիւ, այլ գոհացանք կուրեարագոյններէն ներկայացանելով մաս մը, խորհելով որ այսչափ բուսական պիտի ըլլայ համոզում կայացնելու համար թէ մեր առջև ունինք ժողովողի երկու հին և ուրոյն թարգմանութիւններ:

Անթիլիաս

ԾՈՒԼԱԿԱՆ

(11) AC եւ Երբ. չունին «եւ եւղ»:

(12) Թ. καὶ τοῦ ἀργυρίου ταπεινώσει ἐπακούσεται τα τάντα: AC չունին ταπεινώσει = խնամրհութեամբ:

(13) Թ. πεφουτευμένοι:

(14) Յունարէն տարբերակ — πεπυρωμένοι — կը զտնուի ΧΑC կոտեքսներուն մէջ:

(15) Թ. σαρκός: